

ԽՈՍՐՈՎ ԱՆՁԵՎԱՅՈՒ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Հ. Հ. ԹԱՄՐԱԶՅԱՆ

10-րդ դարի նշանավոր գործիչ և մտածող Խոսրով Անձևացու գրական ժառանգության մի մասն է միայն պահպանվել: Հայտնի են նրա մեկնությունները՝ «Մեկնութիւն ժամակարգութեան» և «Մեկնութիւն աղօթից պատարագին»: Անանիա Մոկացի կաթողիկոսի և Հակոբ Ծպատեցու հայտնի քղթերից պարզվում է, որ նա հեղինակ է նաև հակաճառական բնույթի երկերի՝ հակընդդէմ ժամանակի եկեղեցական կարգերին և իշխանություններին, որի հետևանքով ենթարկվել է քանադորության:

Խոսրով Անձևացու նշված մեկնություններից բացի նրա գրական ժառանգությունից գրեթե ոչինչ չի պահպանվել:

Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում հանդիպում է խրատական բնույթի մի գրվածք՝ վերնագրված «Խոսրովայ բանք առ վասն եկեղեցականսն», որի բնական բնագիրը կազմել, աշխարհաբար թարգմանել և ուշագրավ ուսումնասիրությամբ հանդերձ հրատարակել է Վազգեն սրկ. Գալստյանը¹:

Խոսրով Անձևացու գրական ժառանգության և այս երկի հեղինակային պատկանելության մասին աշխատասիրողը գրում է. «Խոսրով Անձևացու կյանքը և գործերը ուսումնասիրելիս հանդիպեցինք Մ. Չամչյանի հետևյալ հաղորդմանը. «Եւ եղև երեւելի անարատութեամբ վարուց եւ աստուածաշնորհի իմաստութեամբ եւ շարագրեաց բազում զիբս եւ ճառս»²: Ենթադրելի է, որ Անձևացին բեղուն գրիչ է ունեցել, սակայն ցավոք, բացի ժամակարգության և պատարագի մեկնություններից, նրա ժառանգությունից գրեթե ոչինչ չի հասել մեզ: Մաշտոցյան Մատենադարանի թիվ 5411 և 6302 ձեռագրերում հանդիպեցինք «Խոսրովայ բանք առ վասն եկեղեցականսն» վերտառությամբ մի գրվածքի: Սույն գործի՝ Անձևացու հեղինակությանը պատկանելու մասին է վկայում Գարեգին Չարբհանայանը: «Բանք երանելոյն Խոսրովայ» խորագրով երկասիրութեան մը յիշատակութեան հանդիպեցինք, որ հաւանականաբար Անձևացոյն է»³: Գրության լեզուն, ոճը և նպատակային ուղղվածությունը նույնպես խոսում են գործի՝ մեծանուն եպիսկոպոսի գրչի արյունքը լինելու օգտին: Կարծում ենք, որ Անձևացու գործերից հատվածներ կամ ամբողջական գործեր պահպանված են նաև նրա ժամերգության և պատարագի մեկնությունների մեջ, որոնք մաս չեն կազմում կամ առնչություն չունեն սույն մեկնությունների հետ, բայց հավաքված և տեղադրված են այստեղ, ինչպես օրինակ՝ «Մեկնութիւն ժամակարգութեան» տպագրված օրինակում, զիջեբային և առաջնության ժամերգությունների միջև զետեղված «Բանք պիտանիք խրատականք. յոյժ օգտակարք և հոգեշահք նորին սուրբ հոգեկիր վարդապետին Խոսրովու. Չկամքն և զերկիւղն Աստուծոյ ճշմարտութեամբ ծանուցողի»⁴ գործը⁵:

Եվ, իբրք, նշված գործի բնագրային-ոճական համեմատությունը մեկնությունների և հատկապես XIII դարում Մովսես Երզնկացու խմբագրած «Մեկնութիւն ժամակարգութեան» երկի

¹ Տե՛ս «Էջմիածին», 1994, Զ-Է, էջ 30-50:

² Մ. Չամչյան, «Հայոց պատմություն», Երևան, 1985, Բ, էջ 835:

³ Գ. Չարբհանայան, «Հայ հին դպրութեան պատմություն (Ղ-ԺԳ)», Վեներիկ, 1886, էջ 518:

⁴ «Մեկնութիւն ժամակարգութեան», Կ. Պոլիս, 1734, էջ 108-129: Տե՛ս նաև «Մեկնութիւն ժամակարգութեան», Յորթագիտ, 1840, էջ 63-76 (ողորմենիք՝ ըստ վերջին հրատարակության): Սույն գործի աշխարհաբար թարգմանությունը իրականացրել է Տիգրան Խաչատրյանը, տե՛ս «Գանձասար», Բ, էջ 151-167:

⁵ «Էջմիածին», 1994, Զ-Է, էջ 36-37:

մեջ գետեղված Անձևացու «Բանք պիտանիք խրատականք...» խրատի և մեկնության այլ հատվածների հետ կապված չեն թողնում, որ նրանք պատկանում են նույն հեղինակի գրչին:

Խոսքով Անձևացին իր երկերում տալիս է ժամակարգության հիմնական աղոթքների ու քարոզների մեկնությունը, իր խոսքով՝ «հայտնաբանությունը»: Այստեղ չեն մտնում այն աղոթքներն ու քարոզները, որ կապված են առանձնահատուկ օրերի, եկեղեցական տոների, մարտիրոսների հիշատակի և ծեսերի հետ, քանի որ, իր պատճառաբանությամբ, խուսափել է երկարաբանությունից և հիմնական հոգևոր տեքստերի մեկնաբանությամբ աշխատել է պատկերացում, գաղափար տալ ամբողջի մասին: Այսպիսով, նրա մեկնությունն առաջնորդող ձեռնարկ, նախագիտելիք է հանդիսանում եկեղեցական ամբողջ ծխակարգի յուրացման համար:

Խոսքով Անձևացին թողել է երկու հիշատակարան՝ ժամակարգության մեկնության սկզբում և Պատարագի մեկնության վերջում: Դա ենթադրել է տալիս, որ մենք գոյք ունենք նույն մեկնության տարբեր մասերի հետ, և կամ որ այս երկու մեկնություններն էլ գրվել են միաժամանակ և գետեղվել են միև նույն ձեռագիր մատյանում: Երկու հիշատակարաններում էլ հեղինակը խոսում է նույն հոգևոր-գործնական հարցերի, եկեղեցական խաթարված կարգերի, հոգևոր համայնքի խնդիրների մասին, որ կոչված է պարզաբանելու, քացատրելու իր մեկնությունը:

Նրանցում, ինչպես նաև Գրիգոր Նարեկացու պահպանված հիշատակարանում, խոսք չկա, չի շեշտվում պատարագի խորհրդի առանձին մեկնության գոյության փաստը. «Շնորհին Աստուծոյ եղել մեկնութիւն այսմ գրոց՝ ի ձեռն Խոսքովայ Անձևացեաց եպիսկոպոսի... Արդ առաջին սուրբ գրոցս այտորիկ գծագրութիւն՝ եղել ձեռամբ Սահակայ որդոյ տեսոն Խոսքովա՝ սոյն սուրբ գրոցս մեկնողի, յերեք հարիւր իննսուն եւ ինն քուականութեանս Հայոց»⁶:

Խոսքով Անձևացու որդին՝ Սահակը, չէր կարող գրի առնել միայն Պատարագի մեկնությունը առանց ժամակարգության մեկնության: Բնականաբար նա պիտի մեկտեղեր նրա նույնօրինակ երկերը, մանավանդ որ Պատարագի խորհուրդը եկեղեցական ժամակարգության մասն է կազմում:

Նույնը վերաբերում է նաև Գրիգոր Նարեկացուն, որը հետագայում արտագրել է մեկնությունները. նա ևս նույն մատյանում պետք է գետեղեր այդ երկերը, և նրա հիշատակարանն ընդհանուր պիտի լիներ երկուսի համար:

Իրողությունն այն է, որ Խոսքով Անձևացին գրել է մեկ մեկնություն: Նախնական քննզիքն ավելի ընդարձակ ու հանգամանակից խորագիր ունի, քան Մովսես Երզնկացու խմբագրած տարբերակում է. «Բացայայտութիւն կարգաց եկեղեցոյ, քարոզութեանց եւ աղտփից քստ իւրաքանչիւր ժամուց. Խոսքովու Անձևացեաց եպիսկոպոսի»⁷:

Նախագիրն այս օրինակն, ահա, միակտոր է. այստեղ պատարագի մեկնությունն ընդհանուր մեկնության օրգանական մասն է կազմում: Այդպես է նաև պահպանված մյուս հնագիր օրինակում (Մատենադարան N 1328): Այս ձեռագրերն ավելի հին են (13-րդ դարի վերջ), քան Մովսես Երզնկացու ապրած ժամանակը (13-14-րդ դդ.):

Խոսքով Անձևացին նշում է, որ մեկնողական ժանրին է դիմել եպիսկոպոսություն ստանձնելու բերումով, եկեղեցական խաթարված կարգերը վերականգնելու և համայնքի կրթության նպատակներով, իսկ Պատարագի մեկնությունը համընկնում է նրա եպիսկոպոսության տարեթվին (950 թ.):

Սակայն այստեղ կտրվում է տրամաբանական շրջան, քանի որ, այդ նպատակներից ելնելով, նրա մեկնությունն ավելի համապարփակ պիտի լիներ, և ոչ սկզբնապես կենտրոնանալ սուկ պատարագի խորհրդի մեկնության վրա:

Աներկբա է, որ երկի հեղինակային խորագիրն արտահայտում է նրա քովանդակությունը: Պատարագի մեկնությունը ժամակարգության մեկնության մասն է կազմում, որ մեզ հասած ձեռագրերում չունի անզամ առանձին ենթախորագիր:

Սակայն հարցն ունի իր ավելի պարզ լուծումը, որի բանալին գտնվում է հենց Խոսքով Անձևացու երկու քովական ընդարձակ հիշատակարաններում: Համեմատությունը պարզում է, որ նրանք կցված են միև նույն գործին:

⁶ «Մեկնութիւն աղօթից պատարագին», Վեհտիկ, 1869, էջ 67:

⁷ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետ՝ Մատենադարան), ձեռ. N 1329, քիթք 1ա:

Ժամակարգության մեկնության առաջաբան-հիշատակարանում արդեն Խոսրովը շուշախում է իր հիմնական խնդիրներն ու նպատակները, որոնք են՝ հավատի և պաշտոնական-տարության նախահիմքերը, կրոնական ոգու գորացման խնդիրները: Այս ընթացքում, շեշտելով «սուրբ սբառով, բարի մտքով, անկեղծ հավատով» պաշտոնավարելու և աղոթելու խնդիրը, նա մի քանի անգամ ընդգծում և կարևորում է *պատարագի խորհրդի* նշանակությունը: Խոսրովի առաջնահերթ խնդիրներից է նաև պատարագի աղոթքների մեկնությունը. «*Բացայայտութիւն կարգաց եկեղեցոյ, քարոզութեանց եւ աղափից ըստ իւրաքանչիւր ժամուոց. Խոսրովու Անձաւացեաց եպիսկոպոսի.*

Ընդ Աստուծոյ եւ վասն Աստուծոյ խաւսելով, ամենայն արթնութեամբ եւ զգուշութեամբ պարտիմք միտ ղնել բանիցն սաստեղց, զի մի ընդունայն կամ ի դատապարտութիւն մեզ իսկ ասացեալ լինիցին...

Եւ զի այս այսպէս է անշուշտ, ջանացուք ըստ կարի մերում զպաշտանն մեր ի սուրբ սրտէ եւ ի մտաց բարեաց եւ յանկեղծաւոր հաւատոց Աստուծոյ ըմծայել, քանզի *եւ զայն ի Պաղոսէ ունիմք գրութեամբն Աստուծոյ պաղատեալ, զի պատարագ կենդանի սուրբ հաճոյ Աստուծոյ զխաւսուն պաշտանս մեր պատրաստեցուք:* Ի սոյն եւ սաղմոսանուագն յորդորէ՝ երբեմն որպէս յինքնն է երբեմն որպէս Աստուծոյ: Յինքնն ասելն՝ *Մատո՛ Աստուծոյ պատարագ արհնութեան եւ կատարեա՛ բարձրելոյն զուխոս քո:* Եւ դարձեալ թէ՛ հատեր զկապանս ին, թե՛ մատուցից պատարագ արհնութեան եւ զանուն Տեսուն կաքողացից: Եւ որպէս յերեսաց Աստուծոյ՝ յորժամ ասիցէ՛ *պատարագ արհնութեան* փառաւոր արասցէ զիս...

Յաղագս այստրիկ կամեցայ բացայայտել որ ի պաշտաման եկեղեցոյ քարոզութիւնք եւ աղափք բահանայականք, գոր գիտակց մի արհամարհեսցեն, զի թէ իւրեանք անկարաւա են մերոց իմաստիցն, այլ ի պարզամտացն հայեցեալ յաւուս՝ ընկալցին զմեր ջանս վաստակոց եւ զպակասութիւն եղբայրական սիրով ուղղել խոկասցին՝*:

Ինչպէս տեսնում ենք, խոսքն ընդհանրապէս բոլոր քահանայական աղոթքներին և քարոզներին մասին է, բայց հիշատակարանում մի քանի անգամ շեշտվում է պատարագի խորհրդի նշանակությունը, որի աղոթքներին և քարոզներին մեկնությունը ներառվել է հեղինակի ծրագրում:

Այս հիշատակարանին բովանդակությամբ տեղ-տեղ ուղղակիորեն նույնական է Պատարագի մեկնության վերջում կցված հիշատակարանը, որ տպագրում *Յորդորակ* վերնագիրն ունի: Հիշատակարանի սկզբում քառացիորեն կրկնվում է Ժամակարգության մեկնության խորագիրը. «Ընդքիւն Աստուծոյ յայտնարանութիւն արարեալ եկեղեցական կարգադրութեանց՝ ըստ իւրաքանչիւր ժամուոց ի կատարումն հասուցաք, ոչ որչափուներ խորհրդաձութիւն քարոզացն եւ աղօթիցն բանք, այլ որչափիսատրութիւն մեր քաւեաց՝ համառօտեցաք: Եւ թէպէս եւ քազում են եկեղեցականացն կարգաց զանազանութիւնք, քարոզաց եւ աղօթից եւ պատարագամտուցաց, եւ են որք ըստ մարտիրոսաց յիշատակի, եւ են որք ըստ տերունական տօնից... եւ է որ շնորհատրութիւն կարգեալք... գորք բովանդակ բան առ բան ընդ քննութեամբ արկանել, ոչ միայն մեր գրելոյն շինեաք հանդուրժող, այլ եւ ոչ ընթերցողքն՝ լսելութեան: Բայց եթէ հաստատութեամբ որ միտ ղնէլ այսոցիկ՝ որ ասացանս, քաւականապէս առ այլսն ամենեսին միտս ստանայ: Եւ զի՞նչ ասեմք թէ ամենեքումքք գրիցելովքս առ բովանդակ թողեալսն կարողանայ իմաստից, այլ թէ եւ մասին ինչ ի սոցանէ հասանէ մտաց՝ քաւականանայ առ ամենայն լրումն եկեղեցական կարգաւորութեանց:

Վասն որոյ աղաչեմ՝ մի վարկպարագի գորք համարել զմտածութիւն աստուածեղէն բանից, մանաւանդ զքարոզութեանց եւ զաղօթից...

Վասն որոյ եւ դարձեալ իսկ ասէ Պաղոս երանելին, ի յիշել գորինական պատարագն, թէ վասն որոյ հարկ էր օրինաւորացն այնպիսեօքն սրբիլ, եւ բուն իսկ երկնաւորացն՝ առաւել եւս պատարագօք քան զնոյնս: Տեսանէ՞ս, զի ոչ միայն զպատարագն երկնաւոր կոչէ, այլ եւ զմեզ՝ որք երկնաւոր պատարագին հաղորդեցաք: Եւ դարձեալ եւս յայտնագոյնս՝ յորժամ ասէ. Եղբարք սուրբք, երկնաւոր կոչմանն քաժանորդ. եւ զերկնաւորն մատուցանեմք պատարագ...

Համարձակեցա առ այս յանդգնաբար՝ ի հարկէ, եւ ոչ զի անձին փառս ստացայց, այլ զի զեպիսկոպոսութիւն վիճակեցայ, եւ ի վիճակելն՝ տգիտութիւն ի յոլովս վարկայ, եւ բանիւ

* Մատենադարան, ձեռ. N 1329, քերթ 1ա-2բ:

ամենայն ումեք զբովանդակ զայս ծանուցանել՝ անհնար զհասցի, պատշաճ համարեցայ ի զքի հարկանել, զի թերես այսպէս դիրքին առ ուսանել արարից կամողաց...»⁹:

Համեմատենք իրար հետ խորագիրն ու վերջին հիշատակարանի սկիզբն, ուր նշված է երկի բովանդակությունը՝ «*Բացայայտութիւն կարգաց եկեղեցոյ, քարոզութեանց եւ աղտոքից ըստ իւրաքանչիւր ժամուց...*» և «*Յայտնարանութիւն եկեղեցական կարգադրութեանց՝ ըստ իւրաքանչիւր ժամուց...*»:

Ինչպէս տեսնում ենք, կրկնված է «Մեկնութիւն ժամակարգութեան» երկի խորագիրը, որն անառարկելիորեն վկայում է, որ Պատարագի մեկնությունը նրա մասն է կազմում:

Հեղինակի երկու հիշատակարաններն իրար են միացնում միևնույն երկի իրարից տարանջատված մասերը:

Խորով Անճև ացու երկի Պատարագի մեկնության մասում կա նման մի անառարկելի փաստ ևս:

Խորով Անճև ացին վկայակոչում է իր միևնույն գործի նախորդ հատվածներից մեկը, որ չկա Պատարագի մեկնության այդ հատվածին նախորդող մասում, այլ հանդիպում է Ժամակարգության մեկնության մեջ:

«Օրհնեա, Տէր.

զի բեմասութեան տեղի է, եւ ատարեն զաղօթսն օրհնութեամբ, եւ ի վարդապետութեանն յունկնդրութիւն տան զանճինս, եւ ապա զխորհրդականն կատարեն: *Բայց զի յայլում վայրի ասացեալ է մեր վասն որք ոչ կարեւոր համարին զունկնդրութիւն գրոց սրբոց, աստաւոր հարկ համարիմ սակաւ ինչ ասել առ այնուսիկ որք ասենն, զի լսեմ եւ ոչ առնեմ՝ ապա բնաւ եւ ոչ լսեմ, զի մի՛ առելի դատեցայց: Ի դէպ է ասել նոցա. ո՛վ աներկիւղ երկիւղածութեանդ. պատգամ Աստուծոյ եկեալ յերկնից, է՞ր իշխես ասել ոչ լսեմ եւ ոչ առնեմ. ապա ուրեմն առաւել դատնացուցիչ քան զհրեայսն զտանիս Աստուծոյ...*»¹⁰:

Այս հատվածում խոսվում է արք գրքերի ընթերցման ու ունկնդրության, և ընդհանրապես եկեղեցական արարողակարգի նկատմամբ անտարբերության ու արհամարհանքի մասին, որին նվիրված մի ամբողջական քարոզ կա «Ժամակարգության մեկնության» մեջ¹¹: Այս հատվածն է, ահա, հիշատակում հեղինակը, որն ընդգծվում է իր պատկերավորությամբ ու խիստ ոճերով:

«Բայց ընդէ՞ր այժմ խափանեալ է. ոչ վասն այլ իբի, այլ միայն վասն պղերգութեան. քանզի եւ զկանոնքն զիրս ի յորով տեղիս այժմ խափանեալ տեսանեմք. եւ ուր կարդանն քնոյ պատճառ եւ ոչ խրատու օգտի առնեն բազումք: Եւ ըստ յառաջանալոյ ժամանակիս՝ թո՛ի թէ եւ սուղ կարդացումնս այս խափանի. քանզի աւելորդ իբս եւ ո՛չ կարեւոր յորովից թո՛ի:

Եւ երանի թէ աւելորդ միայն՝ եւ ո՛չ վնաս եւս իսկ համարելին բազումք, եւ վայրապար դատարկութիւն ի հոգեւոր եւ ի մարմնատր գործոյ: Եւ ասեն այսպիսի բանս. թէ զմեղս եւ զարդարութիւն ամենայն ոք զիտէ. եւ եթէ խտտորի կամի ի չարէն եւ զբարին առնել, տեղեակ է ամենայն մարդ. իսկ գրովք պատառիլն չէ՛ ինչ շահ, այլ խափանումն ի կարեւորացն:

Եւ այս է որ գամովսական սպառնացումն յարդիւնս ւածէ. զտվն ո՛չ հացի, եւ զծարսուն ո՛չ ջրոյ. այլ սով լսելոյ զբանն Տեառն...

Եւ ո՞ր է բան արդարութեան, եթէ ո՛չ խրատք արք գրոց. եւ որ նոցա տգետն է. տակալին տղայ է թէպէտ եւ լսէ զնոսա, իսկ որ լսէ ո՛չ. զիս՝ ող ապրի...

Եւ ո՛չ միայն մեռեալ են այնմ կենաց, որք ո՛չն կերակրին պատուիրանօքն Աստուծոյ, այլ եւ ի խաւարի աստէն են քանզի ոչ ունին լոյս պատուիրանացն Աստուծոյ...

Եւ եթէ այդպէս է, մթացեալ խաւարաւ ծածկեալ են ոգիք ատեցողացն զպատուիրանս Տեառն... Խելագարեալք են եւ նման շամշերոյն խօսին...

Բայց զի ի սատանայէ խօսին որք խափան լինին գրոց լսելութեան, ասացաք փոքրք ի շատէ. ի կարգս դարձցուք ուր սկիզբն արարաք:

Չի թէ եւ կարեւոր է ընդդէմ նոցա երկայնել զբանս, եւ յորով են առ այս առտասցութիւնք սրբոցն ձայնից, այլ ո՛չ թողու զմեզ պաղատիլ զայսու շատութիւն իբի որ առաջի կայ: Վասն որոյ սակաւաք պատճառս տուեալ ուսումնասիրաց, ի մեր խնդրոցն լուծումն յառաջասցուք»¹²:

⁹ Նույն տեղում, էջ 64-67:

¹⁰ «Մեկնութիւն աղօթից պատարագին», էջ 8-9:

¹¹ Տե՛ս «Մեկնութիւն ժամակարգութեան», էջ 14-19:

Ինչպես տեսնում ենք՝ Խոսրով Անձևացու երկի քննազրային համեմատություններն ու հիշատակարաններն, ինչպես նաև ձեռագրական տվյալները ամատարկելիորեն վկայում են, որ նրա հեղինակած ժամակարգության և Պատարագի մեկնությունները մի ամբողջական երկի մասերն են կազմում:

Այդ է վկայում նաև բուն հղացման գաղափարը՝ կապված եպիսկոպոսական աստիճան ասանայու հանգամանքի և եկեղեցական ողջ արարողակարգը՝ նրա աղոթքներն ու քարոզները կրոնավորների դասին մեկնաբանելու և ժողովրդին լսելի դարձնելու նպատակի հետ, որ ենթադրում էր կրթական-լուսավորչական լայն ծրագիր՝ միաված արթնացնելու կրոնական զգացմունքը քրիստոնեական համայնքի ներքում, նորոգելու նրա խախտված արարողակարգը, նորովի մեկնաբանելու եկեղեցական պաշտամունքի ու ժամակարգության խորհուրդն ու աստվածային նշանակությունը, փրկելու եկեղեցին աշխարհականացումից, գորացնելու նրա հոգևոր սկիզբները:

Այս ծրագրից ելնելով՝ նա պիտի քննության առներ ողջ ժամակարգության աղոթքներն ու քարոզները և կանգ չառներ միայն պատարագի արարողակարգի վրա:

Մատենադարանի հնագույն ձեռագրերը թեև վերջից պակասավոր են, քայքայ իրենց մեջ են ներառում նաև Պատարագի մեկնության մի զգալի մասը, որի մեջ է նաև Պատարագ-աստույցի մի հատված: Այս պատարագամատույցի հատվածն էլ, ահա, ամբողջացնում է երկի կառուցվածքի մասին մեր պատկերացումները. այն *ժամակարգության մեկնության վերջին մասն է կազմում*: Այդ մասին հիշատակում է նաև Խոսրով Անձևացին երկի վերջին կցված իր հորդորակ-հիշատակարանում. «Չի թվալտ եւ քազում են եկեղեցականացն կարգաց զանազանութիւնը, քարոզաց եւ աղօթից եւ պատարագամատուցաց... Բայց եթէ հաստատութեամբ որ միտ ղնէ այսոցիկ՝ որ ասացանս, քառականապէս առ այսն ամենեաին միտս ստանա»¹²:

Ի՞նչ պատճառով են իրարից տարանջատվել նույն երկի տարբեր մասերը: Ինչո՞ւ է Մովսես Երզնկացին իր խմբագրությունից դուրս թողել Պատարագի մեկնության մասը:

Անձևացու այս երկու գործերը հրատարակվել են անջատարար, հավանաբար այն պատճառով, որ սկզբնապես հրատարակվել է Մովսես Երզնկացու խմբագրած տարբերակը, որ գետեղված չէ Պատարագի աղոթքների մեկնությունը:

Հավանաբար ԺԳ դարում, երբ ապրել և գործել է Մովսես Երզնկացին, տեղի էր ունեցել նյութի խորացում ու կենտրոնացում, և անհրաժեշտություն էր զգացվում Պատարագի աղոթքների առանձին մեկնության՝ խորհրդի կարևորությունն առավել շեշտելու և ավելի խորին ու հանգամանակից քննության համար, ինչպես, օրինակ, Ներսես Լամբրոնացու մեկնությունն է: Փոփոխություններ էին կատարվել նաև ժամակարգության մեջ, այն ևս կարիք ուներ նոր հեղինակներով լրացված ու հարստացված մեկնության, ինչպիսին Խոսրովի մեկնության Երզնկացու խմբագրությունն է: Սակայն այդ խմբագրության մեջ կա Խոսրովին վերագրված մի ընդարձակ հատված (էջ 63-76), որ չի հանդիպում նախօրինակը պարունակող ձեռագրերում: Այս հատվածն, ինչպես նշել ենք, իրենից մի ամբողջական խրատ է ներկայացնում, որ ձեռագրերում հանդիպում է նաև իբրև առանձին գործ՝ վերագրված դարձյալ Խոսրովին: Մովսես Երզնկացին, փաստորեն, իր խմբագրած ժողովածուի մեջ է ներմուծել Խոսրով Անձևացու խրատական գործը: Դրա վկայությունն է նաև այն, որ նշված հատվածը մեկնողական բնույթ չունի, առանձնանում է քննազրից իր ինքնուրույն արժեքով: Այդ է վկայում նաև նրա խորագիրը՝ «Բանք պիտանիք խրատականը, յոյժ օգտակարք եւ հոգեշահք՝ նորին սուրբ հոգեկիր վարդապետին Խոսրովու, զկամքն եւ գեղկիղն Աստուծոյ՝ ճշմարտութեամբ ծանուցողի»:

Ինչպես ցույց է տալիս համեմատությունը, համարումներն ի հայտ են գալիս կարգախմբի աղոթքների ու աղոթմունքի սկզբում և վերջում, իսկ հիմնական բովանդակությունը կազմում է Խոսրով Անձևացու մեկնությունը:

Հարկ է նշել, որ Երզնկացու խմբագրած տարբերակից դուրս են մնացել հեղինակային մի շարք հատվածներ¹³: Նրանում կարևոր տեղ է հատկացված Ստեփանոս Սյունեցուց և Հովհան Օձնեցուց քաղած մեկնություններին, բացի դրանից, առկա է բավականին ընդար-

¹² Նույն տեղում:

¹³ Մատենադարան, ձեռ. N 1328, քիթք 126ա:

ձակ մի շերտ, որի հեղինակային պատկանելիությունը չի նշվում¹⁴: Դա, հավանաբար, խրմ-
բագրի՝ Մովսես Երզնկացու հեղինակած մեկնությունների ու խրատարանությունների
շերան է:

Անանիա Մոկացու քրթերում եղած ուղղակի վկայություններից, ինչպես նաև Մեկնու-
թյան մեջ տեղ գտած և ձեռագրերում առանձին հանդիպող նշված երկու խրատների հան-
գամանքից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ Խուրով ԱՆՃԼ ազգին, նշված գործերից բացի,
գրել է բազմաթիվ և տարաբնույթ (մեկնողական, խրատական, հակաճառական և այլն)
գործեր, որոնք չեն պահպանվել:

Г. Г. ТАМРАЗЯН- К вопросу о литературном наследии Хосрова Андзеваци.
Автор статьи обращается к литературному наследию выдающегося деятеля X в.
Хосрова Андзеваци.

Согласно общепринятой точке зрения, Андзеваци считался автором двух
крупных произведений: “Толкование службы часов” и “Толкование молитв ли-
тургии”.

В статье обосновывается, что “Толкование молитв литургии” не отдельное
произведение, а составная часть “Толкования службы часов”.

¹⁴ Տե՛ս Մատենադարան, ձեռ. N 1329, քիթք 125բ-126բ, 130բ-133բ, 133բ-135բ, 135բ-143բ:

¹⁵ Տե՛ս «Մեկնութիւն ժամակարգութեան», էջ 53-57, 90-120, 136-147, 150-155, 158-165, 172-178, 188-193,
196-207, 214-215, 220-237, 241-252: